

Հաւանութեամբը ծաղկին անունը
Ա է հարդա թագուհի դրաւ : Շ ոմասուրք
այսպէս կը պատմէ զիպուածը . “ Ի՞
տարի (1837 ն) յունուարի առջի օրը
Պերպիչէ գետին մէջ Ճամբորդութի
ընելու ատեն , այնպիսի տեղ մը հա-
սանք , կ'ըսէ , ուր որ գետին ջուրը
մէկուղ ժողվէլով հանդարտ լիձ մը
կը ձեանար . ան լշին հարաւային կող-
մը հեռուանց մէկ բան մը տեսանք .
Հետաքրքրութիւննիս շարժեցաւ որ
երթանք տեսնենք թէ ինչ բան է :
Դաւավարները սկսան թիերը ուժով
քաշել . վերջապէս հասանք , տեսնենք
որ մեծ ու սքանչելի բոյս մըն է : Տաշ-
տի ձեռվ ահագին տերե մը , որ հինգ
վեց ոտնաշափ տրամագիծ ունէր՝ ջր-
ըն երեսը տարածուած , եզերքին
վրայի կողմը բաց կանաչ , իսկ տակի
կողմը ու վարի եզերքը սաստիկ կար-
միր : Տերեին վրայ ծաղիկն ալ անոր
համեմատ՝ մեծ ու հիանալի բան .
Թերթերուն գոյնը Ճերմակ , վարդա-
գոյն ու մեխակինման կարմիր : Ի՞նի
որ առաջ գնացինք , տեսանք որ բոլոր
լշիներեսը ասծաղկներով ծածկուած
էր : Ի՞ս ծաղկին կոթը մէկ բթաշափ
հաստութիւնի , վրան սուր ու առա-
ձգական փուշերով . բաժակին տրամա-
գիծը գրեթէ թիզ մըն է , իսկ վարի
գին իրեք բթաշափ . աս բաժակին
վրայ է ծաղիկը . որ երբոր կը բացուի՝
հարիւրաւոր թերթերով բոլոր բա-
ժակը կը ծածկէ : Ի՞ր բացուած ժա-
մանակը բոլոր թերթերը Ճերմակ են ,
և միայն մէջտեղը մեխակի գունով
կարմիր բիծ մը ունի , բայց ետքը կա-
մաց կամաց բոլոր թերթերն ալ նոյն
կարմիր գոյնը կ'առնուն : Հոտն ալ
խիստ անոյշ է , և կ'երենայ թէ ջրի
շուշաններուն մէջ միայն ասիկայ հո-
տաւէտ է : Ի՞ս ծաղկին թշնամի տե-
սակ մը որդ կայ որ մէջտեղի ծուծը
ուտելով բոլոր ծաղիկը կը փճացընէ .
մէկ ծաղկին վրայ քսան հատի չափ
տեսանք աս որդէն :

ԱԶԳԱՑԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Հայերէնագէտ Խարապացի :

ԽՆՉՈՒԱՆ աս դարուս սկիզբները
Խւրոպացւոց մէջէն խիստ քիչ մարդ
եղած էր որ մեր լեզուն սորվելու ետևէ
ըլլային , կամ ինչպէս որ պէտք է՝ լաւ
սորվէին . անոնք ալ ընդհանրապէս
կամ պարզ լեզուագիտութեան ա-
խորժակէն յորդորուած՝ աս արեւ-
լեան լեզուին ալ վեր՝ ’ի վերոյ տեղե-
կութիւն մը ունենալ ուզեր են , և
կամ այլեայլ գիտաւորութեամբ մեր
ազգին մէջ մանել , ու պատմական՝ աշ-
խարհագրական և եկեղեցական տե-
ղեկութիւններ առնել մտածեր են :
Խյսպիսիները ոչ իրենք կըցեր են
մեր ազգին վրայ ստոյգ տեղեկութի-
ներ ունենալ , և ոչ ուրիշներուն ըս-
տոյգ կերպով հասկըցընել : Խսկ աս
դարուս սկիզբէն քիչ մը առաջ , և մա-
նաւանդ երեսուն տարիէ ’ի վեր ,
սկսեր են Խւրոպացիք հետզետէ
մեծ համարում առնել մեր լեզուին
վրայ , ու մեծ ջանքով ետեւ կ'ըլլան
որ սորվին , և ուրիշներուն ալ սորվե-
ցընեն : Հասկըցեր են թէ արեւելեան
ազգաց մէջ կայ այնպիսի ազգ մըն
ալ՝ որ առանց քիչւորութեանընյե-
լու՝ արժանի է մեծ մտադրութեան .
վասն զի ատենով ոչ միայն իրեն սեպ-
հական երկիր ու տերութիւն ունե-
ցեր է , հապանակ ծաղկած տէրու-
թիւն , ծաղկած գրականութիւն ,
բարեկարգ պատմութիւն , ու հաս-
տատուն առաքինութիւն : Խւ աս
կատարելութիւնները աւելի լաւ կը
հասկընան՝ երբոր կը բազդատեն ու-
րիշ մեզի գրացի եղած ազգերուն նոյն
պիսի յատկութեանցը հետ : Ուստի
ոչ միայն մասնաւոր գիտուններ , այլ
նաև մեծամեծ տէրութիւնները ի-
րարմէ օրինակ առնելով , թագաւո-
րական ծախքով վարժապետներ դը-
րած են հայերէնի համար՝ երեւելի
քաղաքներու մէջ , ինչպէս Փարիզ ,

Պեռլին, Փեթրպուրկ, Անաքըյ, Լուվէն, Տորփաթ, և ուրիշ տեղեր։ Վասարն հարկաւ մեծ ուրախութեա պատճառ պիտի ըլլայ մեր ազգին, որ մեր լեզուն, պատմութիւնը, գրականութիւնը, և ամէն գեղեցիկ յատկութիւնները օրէ օր աւելի ծանօթ կ'ըլլան ամենուն, ու ասանկով լուրոպացիք իրենք կը սրբագրեն իրենց հին ու նոր հեղինակներուն ծուռումուռ խօսքերն ու կարծիքները որ տուած էին Հայոց ու Հայաստանի վրայ : Ո՞էկ կողմանէ ալ աս մեծ ու փափաքելի օգուտը կ'ունենանք լուրոպացւոց հայասէր ու հայերէնագէտ ըլլալէն, որ եթէ ինչուան հիմա կը գտնուին մեր ազգին մէջ այնպիսի անձինք որ ազգային լեզուին, պատմութեանը և աշխարհագրութեանը տեղեակ չըլլալով՝ կ'արհամարհեն իրենցը, և կը գովեն միայն օտարներունը, գէթ ասկէ ետքը՝ օտար ազգաց հայասիրութենէն խանելով՝ կը ջանան իրենք իրենց սեպհական պարծանքը ուրիշի չթողուլ և գոնէ աս կողմանէ ուրիշներէն վար չմալ . չթողուլ որ աս կողմանէ ալ մինչե 'ի սպառ կատարուի մեր ազգին վրայ ան ցաւալի աստուածային վՃիռը՝ որ ատենով Հրէից ազգին վրայ որոտաց ու կատարեց Վատուած, թէ “Օ աշխարհ ձեր առաջի ձեր օտարք կերիցեն” :

Բայրոր հայագէտ լուրոպացւոց մէջ երկու հոգի ելան մօտ ատեններս՝ որոնց մէկը իր անգիւտ ու հրաշալի տաղանդովը, մէկալը իրեն բարձր աստիճանովը մեր ազգին մեծ պատիւ ըրին՝ լեզունիս սորվելով : Վաղինն է լորտ Պայրն անունով հռչակաւոր անգղիացի բանաստեղծը, որ Ա ենետիկ բնակած ժամանակը մեր լեզուն սորվելու ետևէ եղաւ, և այնչափ վարժեցաւ որ չափաւորապէս կը հասկընար պարզ շարադրութիւնները, և անգղիարէն կը թարգմանէր : Բայց աս կարգէ գուրս մարդուն վրայ կ'արժէ որ ուրիշ անգամ տեղնիտեղը խօսինք : — Լրկրորդն է լուքքայի հի-

մակուան գուշաքը կարոլոս Պուրպոն, որ իր բնական սրամութեանը հետ՝ արևելեան վառվըռոււն մտածութիւները միացուցած ըլլալով, սէր ձգեց նաև մեր լեզուին վրայ . մեր վսեմ երգերուն և աղօթքներուն մէկ քանի թարգմանութիւններէն մեծ համարում առաւ մեր գրականութեանը վրայ, ու նախ հոս Ա ենետիկ սկսաւ մէկէն սորվել զարմանալի յաջողութեամբ ու Ճիշդ և մաքուր հնչմամբ . հիմայ ալ իր պալատին մէջ քաջ հայագէտ անձէ մը դաս կ'առնէ ամէն օր : Վ. հ. որչափ քաղցը միթարութիւն է ազգասէր սրտի մը համար, որ գոնէ հինգհարիւր տարիէն ետքը՝ թագաւորող անձի մը բերնէ լսէ իր թագաւորներուն և իշխաններուն ատենով բանեցուցած լեզուն . . . Վանցմէ դուրս հին և նոր հայագէտներուն վրայ համառօտ գիտելովները հոս կը բովանդակենք : Վաղին հայագէտ եւրոպացին է Բարթուղիմէոս պոլոնիացի լատին եպիսկոպոսը, որ 1316ին Հայերէն սորվեցաւ, անոր հետ մէկտեղ քանի մը գրքեր թարգմանեց լատինէ հայերէն, և ինքն ալ շատ քարոզներ շարադրեց որ ինչուան հիմա ունինք : Վայնպիսի ժամանակ որ մեր ազգին մարմնաւոր իշխանութիւնը օտարտերութեանց բռնութենէն սաստիկ տըկարացեր էր, և հոգեսոր իշխանութիւնը տգէտ առաջնորդներու ձեռք սկսեր էր իյնալ, աս սրբակաց եպիսկոպոսին խաղաղասէր և իմաստուն բնաւորութիւնը քիչ օգուտ ըրաւ մեր ազգին . մանաւանդ թէ կուռասէր ու տգէտ մարդիկ քանի մը բան սորվելով իրմէ՝ սկսան իրենց ազգակից եղբարցը հետ կուռըտիլ, և մեծամեծ վասներ ընել ազգին : Բայց շատ խելացի անձինք ալ ան գեղեցիկ ու ազնիւ ծաղիկէն իմաստութեան անոյշ մեղքը քաղելով, ազգին մէջ Ճիշդ և ուղիղ տրամաբանութե ոճը մը ցընելու պատճառ եղան :

Ղնկէ ետքը ինչուան 1700^{ին} սկիզբ-ները իրարմէ աւելի կամ պակաս հայերէնագէտ սեպուեցան Ֆիրանչիս կոս ՈՒիվոլս, Պողոս Փիրոմալ, Ալ-ղեմէս Գալանոս, Յակոբ ՈՒիլոթ, և ՈՒաթիւրին ՈՒէյզիէր Ուաքրոզ : Իսոնց ամենուն ալ հայագիտութիւն կիսկատար ու շատ պակասաւոր էր, ինչպէս որ յայտնի կ'երենայ իրենց տպած գրուածքներէն : — ՈՒիվոլան հայերէնքերականութիւն մը ու բաւարան մը տպեց, մէկը ՈՒիլան՝ մէկալը Փարիզ, երկուքն ալ մէկմէկէ խառնակ ու պակասաւոր : — Փիրոմալը չորս տարի հայաստան կենալէն ետքը Փիլիպոս կաթուղիկոսին աղաջանքով ՈՒղմիածնայ վանքին մէջ լատիներէնին և զանազան գիտութեց դասատուութիւն ըրաւ : Իսոր աշակերտներէն երկու իրեք հոգի եղան՝ որ իրենց վարժապետէն աւելի թեթև ու ծանծաղամիտ գտնուելով, ուղեցին մեր լեզուն ալ բոլորովին լատիներէնի նմանցընել . և ասոնք են Ուսկան վարդապետը, Ուարդան Յունանեան և Յակոբ Հոլով : — Լղեմէս Գալանուը որչափ որ աւելի ետևէ եղաւ հայերէնի, ու հայոց վրայ տեղեկութիւններ տալու Խւրոպացւոց, այնչափ ալ աւելի քար գայթակղութեն եղաւ ուրիշ հայերէն չգիտցողներուն. վասն զի ասոնք չափազանց վստահութիւն ունենալով անոր հայագիտութեանը վրայ, ստոյգ տեղեկութիւններուն հետ անստոյգներն ալ օրինակեցին, ու մէշերնին տարածեցին : — ՈՒիլոթին ալ հայագիտութիւն Գալանոսին վար չմնար. բայց ասոր բառարանը աւելի Ճիշդ է : — Ուաքրոզ բազմահմուտ գաղղիացին, որ Պլըրուշի թագաւորին գըքապետն էր, հոչակաւոր հայագէտներուն մէկն եղաւ, և իր անունովը Խւրոպացւոց աւելի հետաքրքրութիւնը շարժեց՝ հայերէնի ետևէ ըլլալու :

Իսոնցմէ ետև հայերէնի տեղեակ եւրոպացին եղաւ Գուլիէլմոս ՈՒիլոֆրուա գաղղիացին, որ շատ մեծ

համարմունք ունէր մեր գրականութեանը վրայ : Իսոր աշակերտն էր ՈՒիմն Ոււռտէ աղնիւ և պատուական քահանան, որ քսան տարիի շափհայերէնի ետևէ ըլլալէն ետքը՝ Գաղղիոյ թագաւորին յանձնարարութերը եկաւ մեր Ունետիկի վանքը, ու երկու տարի հոն կատարելագործելով իր հայագիտութիւնն ու շինած բառարանը, դարձաւ Գաղղիա ու հոն վախճանեցաւ . իսկ բառարանը ինչուան հիմա ձեռագիր մնացած է : — Խրելի հայագէտներէն մէկն էր նաև Յովակիմ Ըստէր գերմանացին, որ հայերէնը ՈՒմսդերտամսորվեցաւ, ու Ուտաման լեզուին գանչ անունով քերականութիւն մը շինեց՝ շատ հմտութեք ու աղէկ բանագատութեամբ : Իսոր օգնութեամբը հայերէն սորվեցան նաև երկու անգղիացի եղաւրք՝ Գուլիէլմոս և Գէորգ Ուիմոն ըսուած, որ Խորենացւոյն պատմութիւնն ու աշխարհագրութիւր լատիներէն թարգմանեցին . և առ իրենց աշխատանքովը այնպիսի մեծ արդիւնք ունեցան՝ թէ մեր աղգին և թէ Խւրոպացւոց առջեր, որ արժանապէս աչք գոցելու է իրենց մէկ քանի սխալներուն : Գանք մեր դարուն մէջ անուանի եղած եւրոպացի հայագէտներուն : Կափոլէնն Պոնափառթէին կայսերութեան օրերը Փարիզ գտնուելով Կահան Գրպետեան մերազգի վարժապետը, դիւրաւ ծանօթացաւ Կափոլէնին՝ որ մեր ազգէն շատ կտրիճ թիկնապահներ ունէր քովը . և Կափոլէնն սահմանեց որ ինչպէս ուրիշ արևելեան լեզուաց՝ նոյնպէս ալ հայերէնի համար մասնաւոր վարժապետ մը գրուի թագաւորական գըքքատան քովը, տարին հինգ հազար Քրիստով . և առաջին վարժապետ եղաւ նոյն պարոն Գրպետը : Իսոր աշակերտներուն մէջ խիստ տնուանի եղաւ Ուն-Ուառթէն գաղղիացին, որ արդէն ուրիշ արևելեան լեզուներ գիտնալովը, և աղէկ մատենագրութեն ոչ ունենալովը, Խւ-

ըոպայի երևելի արևելագէտներէն մէկն էր : Իրեն գրուածներէն կ'իմացուի թէ իրմէ առաջ եղած ամէն հայագէտներէն ալ վեր էր ինքը . բայց ափսոս որ մէկքանի ծուռ պաշարմունքներով, և իր հմտութեանը վրայ չափէ դուրս վստահութիւն մը առնելով՝ սխալ տեղեկութիւններ ալ տուաւ Եւրոպացւոց՝ մեր ազգին աշխարհագրութեանն ու պատմութեանը վրայ : Եւ թէպէտ ետքերը իմացաւ իր պաշարմունքը, և սկըսաւ սրբագրել իր սխալները, բայց մահը վրայ հասնելով 1829ին վախճանեցաւ :

Հիմա Փարիզ հայերէն լեզուի վարժապէտ է պարոն Առվայլեան տը Ֆլորիվալ անունով աղնիւ ասպէտը, որ իր հայագիտութիւնը կատարելագործելու համար երկու անգամ Անեատիկ մեր վանքը եկաւ : Իր երևելի գործքը, որով մեծ արդիւնք ունի Եւրոպացւոց առջեր, ան եղաւ որ իսորենացին գաղղիարէն թարգմանեց հաւատարիմ թարգմանութեամբ, ու գեղեցիկ տպագրութեամբ հրատարակեց . յուսանք որ ուրիշ այսպիսի գրքերով ալմեր ազգին վրայ սոտց տեղեկութիւններ հաղորդէ Եւրոպացւոց նաև ասկէ ետքը :

Պարոն Առվայլեանէն սորվիլսկսաւ, ու նոյնպէս Անետիկ գալով կատարելագործեց իր հայերէնը նաև ուսումնասէր պարոն Եւգինէս Պոուէ գաղղիացին, որ մէկքանի մանր գըրուածքներ ալ հանեց մեր ազգին վըրայ՝ բաւական հմտութեամբ ու գովելի ջանքով : Դէպ'ի հայաստան ու Պարսկաստան ըրած ձամբորդութիւն ալերկու հատոր գաղղիարէն գրուածքով հրատարակեց :

Դտալացւոց մէջ անուանի հայագէտ է հիմա Տէր Յովսէփ Վափիկէլ լէթթի վենետիկեցի քահանան, որ մեր Շնորհալւոյն թղթերը լատիներէն թարգմանեց, Եղիշէին պատմութիւրիտալերէն, նոյնպէս ալ իսորենացին, և մեր բարեյիշատակ ։ Ի ուկաս

ինձիձեան վարդապէտին Հնախօսութիւնն ալ թարգմանաբար քաղեց, ու տպեց աս տարիներս : Ի՞ս գործքս (իրեն մէկքանի առանձնական կարծիքներուն չնայելով) ուրիշ ամէն եւրոպական գրուածքներէն աւելի տեղեկութիւն կուտայ Եւրոպացւոց՝ մեր ազգին ամէն հին և նոր յատկութեանցը վրայ :

Վաջ հայագէտներուն մէկն էնաև պարոն Փէթէւմանն անունով Պլըրուշը, որ հիմա Պիերլին քաղաքը արեւելեան լեզուաց վարժապէտ է : Ի՞ս լեզուագէտ ու պատուական անձին յաջողակութիւնը՝ որով քիչ ատենի մէջ մեր լեզուին կանոններուն տիրեց, ու ինչուան հայերէն գրեթէ ամենեին անսխալ շարադրութիւն կ'ընէ, յայտնի կ'երևնայ իրեն հանած հայերէն ու լատիներէն քերականութեանը մէջ, որ Եւրոպացւոց շատ օգտակար կրնայ ըլլալ :

Երկու երևելի հայագէտներ ալ ունինք Անաքոյ՝ Պաւիերայի մայրաքաղաքը . մէկն է պարոն Այմանն անունով թագաւորական թանգարանին վերակացուն, որ մեր Եղիշէին պատմական մասը անգղիարէն թարգմանեց ու տպեց, և Պերմանացւոց օրագիրներուն մէջ շատ հմտական յօդուածներ կը գնէ միշտ մեր ազգին վրայ : Անէկան է Անտիշման անունով մեծապատիւ կանոնիկոսը, որ նոյն պէս իմաստուն գրուածքներով մեր գրականութիւնն ու պատմութիւնը կը հաղորդէ Պերմանացւոց :

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ԽԵԼԱՑԻ ԽՈՍՔԵՐ ՈՒ ԶՈՒՏՐԱԾԱԼԻ ԴԻԳՈՒԱԾԱՆՆԵՐ

Անէկան հասկելու:

Եցաւ ու հարուստ մարդուն մէկը մեռնելու վրայ է եղեր . խիստ հեռաւր ազգականներէն մէկը քովս գըտ-